ZIRAN
ծիրան = aprikose = prunus armeniaca
**pierrot hans**, Schaffhauserstrasse 30, CH-8006 **Zürich** **www.ziran.ch**
+41 44 241 41 31, +41 79 666 01 26 info@ziran.ch

# Ծիրան-բաժնետոմս

## Սիրելի բարեկամներ

Շուրջ 15 տարվա բարելավական և հետևողական աշխատանքների արդյունքում մեկ տարի առաջ մեզ հաջողվեց հիմնադրել հայկական խանութը՝ առաջարկելով Հայաստանից ներմուծված սիրված ապրանքներ: Հայկական խանութը դարձել է հանդիպման կենտրոն, որտեղ կազմակերպվում են նաև տարբեր մանրածավալ միջոցառումներ: Սակայն վերջերս շատերը, հատկապես այն մարդիկ, որոնք տեղյակ են Հայաստանում նույն ապրանքների գներին, պարբերաբար գանգատվում են, որ այստեղ ապրանքները շատ **ավելի թանկ** են վաճառվում: Դրա համար կա մի պարզ բացատրություն:

## Գումարի մեծ մասը մնում է Հայաստանում: Ինչու՞

Գումարը ծախսվում է հիմնականում ապրանքներ ձեռք բերելու համար: Մենք անմիջապես աշխատում ենք տեղական արտահանողների հետ: Արտահանման բոլոր աշխատանքների, այդ թվում պահեստավորման, տեղափոխման, ստուգումների և սերտիֆիկացիայի, ինչպես նաև փաթեթավորման և հարկային տուրքերի վճարումների համար անհրաժեշտ ծախսերը տեղի արտահանողներն **ի վիճակի չեն հոգալու**: Ֆինանսավորումը իրականանում է Շվեյցարիայում կատարված առևտրի շնորհիվ: Այդ պատճառով էլ այստեղ նույն ապրանքները վաճառվում են կրկնակի կամ կրկնակիից ավելի գներով:

Ծիրան խանութի եկամուտը բացառապես ներդրվում Հայաստանում կատարված աշխատանքների համար, որը և մեր գլխավոր նպատակն է:

Եթե դուք նույնպես կարևորում եք մեր աջակցությունը Հայաստանում ապրանքների արտահանման գործին, ապա ըմբռնումով կմոտենաք այն գներին, որոնք մենք հարկադրված ենք նշանակել: Ներկայիս եկամուտը չի բավականացնում խանութի տեղավարձի և աշխատավարձների համար: Բոլոր աշխատակիցները, այդ թվում նաև ես, աշխատում ենք անվճար:

Ձեր ԲԱԺՆԵՏՈՄՈՎ, ինչպես նաև հաճախակի առևտրով, դուք կարող եք օգտակար լինել
- որպեսզի խանութը գոյատևի և իր ծախսերը հոգա
- որպեսզի պահանջվող գումարը շարունակի հոսել Հայաստանում արտադրվող ապրանքների համար

Հայաստանի համար լավագույն ցանկություններով և սրտագին ողջույններով

Ծիրան

Պիերրո Հանս